ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> մարտի 2015 թ. N 73

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի N282-Ա հրամանը.

որոշում եմ՝

1. Հաստատել 2015 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN1-3 հավելվածների:

2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին (Փ. Կարապետյան)՝ առաջին եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**